ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,
escs.gov.am

N 02/09.1/26838-2026

«Մեդիան հանուն կրթության»
հասարակական կազմակերպության
նախագահ Անուշ Մարտիրոսյանին
Էլ. փոստի հասցեն՝ mediaforeducation.ngo@gmail.com

Ի պատասխան Ձեր՝ 2026 թվականի
հուլիսի 24-ի 2134565 գրության

Հարգելի՛ տիկին Մարտիրոսյան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Ձեր ներկայացրած հարցադրումներին ի պատասխան հայտնում եմ, որ.

1. 2026 թվականի 9-րդ դասարանի «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաների ինտեգրված էսսեի ձևաչափով ավարտական քննության արդյունքների, կազմակերպման և արդյունավետության ուսումնասիրության վերաբերյալ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը պլանավորել և իրականացրել է 9-րդ դասարանի «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաների ինտեգրված էսսեի ձևաչափով ավարտական քննության ուսումնասիրություն:

Ուսումնասիրության նպատակն է եղել գնահատել նոր քննաձևի կիրառման առանձնահատկությունները, ուսումնասիրել քննության կազմակերպման, բովանդակության և գնահատման գործընթացներին առնչվող հարցերը, ինչպես նաև վերհանել այն հիմնական գործոնները, որոնք կարող են նպաստել 2027 թվականի քննության ձևաչափի, գնահատման չափանիշների և կազմակերպական գործընթացի հետագա բարելավմանը:

2. Ուսումնասիրության հիմնական եզրակացությունների, ուժեղ և թույլ կողմերի, արձանագրված խնդիրների վերաբերյալ

Ուսումնասիրության արդյունքների ամբողջական ամփոփումը դեռևս ընթացքի մեջ է, սակայն նախնական դիտարկումները ցույց են տալիս, որ ինտեգրված էսսեի ձևաչափը կարող է

նպաստել սովորողների միջառարկայական մտածողության, վերլուծական կարողությունների, փաստարկված գրավոր խոսքի և գիտելիքների համակարգային կիրառման զարգացմանը:

Ուսումնասիրվող գրավոր աշխատանքներում որպես ուժեղ կողմեր դիտարկվել են թեմայի ընդհանուր ըմբռնումը, առաջադրանքի պահանջների պահպանումը, գրական և պատմական նյութերի համադրման փորձը, էսսեի կառուցվածքի պահպանումը, մտքի հաջորդական ներկայացումը և լեզվական գրագիտությունը:

Միաժամանակ նախնական վերլուծությամբ արձանագրվել են նաև բարելավման կարիք ունեցող ուղղություններ: Դրանք վերաբերում են պատմական նյութի առավել խորքային և նպատակային կիրառմանը, գրական և պատմական բաղադրիչների առավել գիտակցված ինտեգրմանը, փաստարկների լիարժեք հիմնավորմանը, ինքնուրույն դատողության և վերլուծական մտածողության զարգացմանը, ինչպես նաև գնահատման չափանիշների կիրառման միասնականության ապահովմանը:

Ուսուցիչների և սովորողների արձագանքները, ինչպես նաև գրավոր աշխատանքների վերլուծությունը ցույց են տալիս, որ նոր ձևաչափի լիարժեք ներդրման համար անհրաժեշտ է շարունակական մեթոդական աջակցություն, չափանիշների առավել մանրամասն պարզաբանում և ուսումնական գործընթացում ինտեգրված էսսեագրության կարողությունների հետևողական զարգացում:

3. Ուսումնասիրության իրականացման ժամկետների և մեթոդաբանության վերաբերյալ

Ուսումնասիրությունն իրականացվել է 2026 թվականի հունիս–հուլիս ամիսներին: Հետազոտության այս փուլում ընդգրկվել են Երևանի բոլոր վարչական շրջանները ներկայացնող 21 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ներառելով սովորողների թվաքանակով տարբեր՝ մեծ և փոքր դպրոցներ:

Հետազոտության այս փուլի իրականացումը բացառապես Երևանի դպրոցներում պայմանավորված է եղել տվյալների հավաքագրման, քննության ընթացքին ներկա գտնվելու, ինչպես նաև նախնական արդյունքների ամփոփման ժամանակային և մարդկային ռեսուրսային հնարավորություններով:

Քանի որ Գնահատման և թեստավորման կենտրոնն իրականացնում է քննական առարկաների արդյունքների քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, ԿԶՆԱԿ հիմնադրամի Հետազոտությունների բաժինը նպատակահարմար է համարել ուսումնասիրությունը կենտրոնացնել քննության որակական կողմերի վրա:

Ուսումնասիրության շրջանակում կիրառվել են տվյալների հավաքագրման և վերլուծության մի քանի մեթոդներ: Մասնավորապես՝ իրականացվել են սովորողների և դասավանդողների առցանց հարցումներ՝ բացահայտելու քննության ձևաչափի վերաբերյալ նրանց վերաբերմունքը, մեթոդական գործընթացի առանձնահատկությունները, հիմնական դժվարությունները և ակնկալիքները: Քննությունից հետո իրականացվել են «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաների ուսուցիչների մասնակցությամբ ֆոկուսխմբային քննարկումներ,

որոնց ընթացքում քննարկվել են քննության բովանդակության, ձևաչափի, կազմակերպման և գնահատման վերաբերյալ ուսուցիչների փորձը, մասնագիտական կարծիքներն ու առաջարկությունները:

Առավել ամբողջական պատկեր ստանալու նպատակով ուսումնասիրվել են նաև արդյունքների երեք մակարդակներում՝ ցածր, միջին և բարձր միավորներ գրանցած սովորողների գրավոր աշխատանքներ: Վերլուծության ընթացքում դիտարկվել են սովորողների՝ թեմայի ըմբռնումը, գրական և պատմական նյութերի կիրառությունը, դրանց ինտեգրման մակարդակը, էսսեի կառուցվածքը, մտքի փաստարկումն ու հիմնավորումը, ինքնուրույն դատողությունն ու վերլուծական մտածողությունը, ինչպես նաև լեզվական գրագիտությունը:

Ֆոկուս խմբերի և առցանց հարցումների արդյունքները համադրվել են գրավոր աշխատանքների բովանդակային, կառուցվածքային և գնահատման վերլուծության հետ: Այս համալիր մոտեցումը հնարավորություն է տվել քննությունը դիտարկել տարբեր կողմերից, բացահայտել տարբեր մակարդակի աշխատանքներին բնորոշ ուժեղ և թույլ կողմերը, գնահատման հնարավոր շեղումները, ինչպես նաև առանձնացնել քննական գործընթացի կազմակերպման, բովանդակության և գնահատման բարելավման հիմնական ուղղությունները:

4. Ուսումնասիրության արդյունքները 2027 թվականի քննության ձևաչափի, գնահատման կարգի և կազմակերպման գործընթացի բարելավման ընթացքում հաշվի առնելու վերաբերյալ

Ուսումնասիրության արդյունքները նախատեսվում է օգտագործել 2027 թվականի 9-րդ դասարանի ինտեգրված էսսեի քննության ձևաչափի, գնահատման չափանիշների և կազմակերպական գործընթացի բարելավման նպատակով:

Մասնավորապես՝ արդյունքները կարող են հիմք հանդիսանալ քննության առաջադրանքի կառուցվածքի հստակեցման, գնահատման չափանիշների վերանայման և առավել կիրառելի ձևակերպման, չափանիշների օրինակներով և մեկնաբանություններով համալրման, գնահատողների և ուսուցիչների համար մեթոդական աջակցության նյութերի մշակման, ինչպես նաև սովորողների նախապատրաստման գործընթացում ընթերցանության, փաստարկման, պատմական նյութի վերլուծության, միջառարկայական կապերի կառուցման և ակադեմիական գրավոր խոսքի զարգացման բաղադրիչների ուժեղացման համար:

Բացի այդ, ուսումնասիրության արդյունքները հաշվի կառնվեն «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաների ուսուցիչների համագործակցության առավել համակարգված կազմակերպման, փորձնական առաջադրանքների մշակման, նախապատրաստական աշխատանքների կատարելագործման և գնահատման մոտեցումների միասնականացման գործընթացներում:

5. Ուսումնասիրության արդյունքների, ամփոփ հաշվետվության կամ վերլուծական փաստաթղթերի տրամադրման վերաբերյալ

Վերջնական փաստաթղթի պատրաստումից հետո արդյունքները սահմանված ընթացակարգերով կդիտարկվեն և կօգտագործվեն 2027 թվականի քննության ձևաչափի, գնահատման չափանիշների և կազմակերպական գործընթացի բարելավման նպատակով:

Համապատասխան վերլուծական նյութերի տրամադրման կամ հրապարակման հարցը կարող է դիտարկվել ուսումնասիրության ամբողջական ամփոփումից և ներքին մասնագիտական քննարկումներից հետո՝ գործող կարգավորումներին համապատասխան:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

Կատ.՝ Հակոբյան Ալինա
Հանրակրթության վարչության
հանրակրթության և արտադպրոցական
կրթության քաղաքականության մշակման և
վերլուծության բաժին, հեռ.՝ 010-599-699 /519/